

## ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒՆ ՀԱՉԱՐԱԳԱՆՁ

### Կազմեց՝ ՋԱՆԻ ՉԱՐԳԱՐԵԱՆԸ 2007

17 Փետրվար 2007  
336-308

#### ԱՊՐԵՆՔ ՈՒ ՇՆՉԵՆՔ ՀԱՅԵՐԵՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա կաթողիկոսը օրհնութան յատուկ գիրով ներկայ 2007 տարին հռչակել է **ՀԱՅ ԼԵՉՈՒՆ ՏԱՐԻ**: Վեհափառ Հայրապետը, իր օրհնութան գիրով, մեր ուշադրությունը կենտրոնացնում է Մեսրոպաստեղծ մայերին լեզվի վրայ, որպեսզի իւրաքանչիւր հայ ինչ տարիքի եւ հանգամանքում էլ լինի մտածի իր լեզվի մասին, խորհի, թէ նա իր առօրեայ կեանքում ինչ չափով մտածում է այդ մասին եւ փորձում իր լեզուն մաքուր, անաղարտ ու սուրբ պահել:

Լեզուն ժողովուրդների հաղորդակցութեան, իրար հետ յարաբերութեան ամենակենդանի հաղորդական կապն է:

Լեզուն ժողովուրդների անցեալի կեանքի, պատմութեան ճանաչման բանալին է:

Լեզուն ժողովուրդների մշակութային ստեղծագործությունների, նւաճումների ու ձեռքբերումների հայելին է, որին նայելիս ժողովուրդը ինքն իրեն է տեսնում իր ողջ էութեամբ:

Լեզուն ժողովուրդների հոգեւոր կեանքի ու արժէքների, այլեւ ապրումների ու արժէքների արտայայտութեան գրիաւորագոյն միջոցներից է:

Հայ ժողովուրդի համար Մեսրոպաստեղծ լեզուն եղել է մեր գոյութեան առանցքը, յաւերժութեան երաշխիքը, պահպանութեան վահանն ու զրահանդերձը: Այլ բացատրութեամբ հայ լեզուն եղել է, է՛ եւ մնալու է միջնաբերդը մեր հոգեւոր, ազգային ու բարոյական արժէքների: Որքան գեղեցիկ են ու ներշնչող անմահանուն գրողի՝ Խաչատուր Աբովեանի հետեւեալ խօսքերը.-

«Ախ, լեզուն, լեզուն, լեզուն որ չըլլի, մարդ ընչի՞ նման կըլլի: Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հաւատը: Լեզուդ փոխի՛ր, հաւատդ ուրացի՛ր, էլ ինչո՞վ կարես ասել, թէ որ ազգիցն ես»:

Մեզ մեր անցեալին, պատմութեան կապողը մեր լեզուն է, մեզ իրար կապողն ու միացնողն էլ մեր լեզուն է. մեզ հարազատօրէն, հայօրէն պահողը ու զօրացնողը մեր լեզուն է: Հետեւաբար Մայրենի մեր լեզուն մայրական գուրգուրանքով ու սիրով մեզ հասցրել է այսօրւան: Ու մենք մեր այսօրը հակառակ բազմաթիւ դժւարութիւնների, արգելքների պարտաւոր ենք ջերմացնելու հայ լեզուով, առաքելահիմն մեր հաւատով:

Ներկայ դարը համաշխարհայնացման իր մարտահրաւերներով թելադրում է մեզ, որ զգօն ու արթուն լինենք, չտարուենք անտարբերութեան մեղքով, բայց մանաւանդ չմոռանանք, որ այսօր մեր լեզուն, մեր հաւատը, մեր հայրենիքը որեւէ մէկ ժամանակից աւելի վտանգի մէջ են նաեւ նահանջի ու վտանգաւոր հանգրւանի մը սեմին են կանգնած: Հայ բանաստեղծը գրել է.-

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,  
Ուր կը մտնէ ամէն հայ իբրեւ տանտէր հարազատ,  
Կը ստանայ սեր ու սնունդ սրտի հպարտ ցնծութիւն.

Այսօր մենք ինչպես ենք տեսնում այդ տունը՝ մեզանից քանի հոգի այդ տնում ինքզինք հարազատ է զգում, այսինքն հարազատօրեն ճիշտ ու անսխալ խօսում, գրում ու ստեղծագործում է: Ժակ Ս. Յակոբեանը գրում է.-

Հայ լեզուն հողն է հայուն՝

Հայրենիքի մը հանգոյն...

.....  
Արդարեւ մեզանից քանի հոգին տազնապում է այդ հողով, այսինքն հայրենիքով, որ որեւէ մէկ ժամանակից աւելի կարիքն ունի իր որդւոց համատեղ աշխատանքին, -

Լւիրումին ու գոհունակութեան այլեւ յանձնառութեան:

Սիրելի աշակերտ, աշակերտուհիներ,

Հայ լեզւին Լւիրած ոտանաւորների այս ծաղկեփունջը ձեզ ենք Լւիրում «Հայ լեզւի տարւայ» առիթով: Դուք՝ որպէս կոկոններ բացւած Մեսրոպատունկ այգում պիտի սնիք, աճիք ու դառնաք բուրումնաւետ ծաղիկներ մեր ժողովրդի, մեր գաղութի կեանքում: Վստա՛հ եղէք, որ հայոց լեզուով դուք առաւել պայծառանալու էք, աւելի լուսաւորելու եւ զօրանալու էք: Կարդացէք ու ասմունքեցէք, որպէսզի ձեզանով հայ լեզուն նոր շունչ ու ոգի զգեցած շարունակէ իր յաղթական ընթացքը, որպէսզի նա կազմի անգուգական երկւորեակ Արագածի գագաթից անպարան կախեալ Լուսաւորչի կանթեղի հետ մէկտեղ վասն անսասանութեան ու յաւերժութեան հայկազեան ցեղի եւ մեր մեծասքանչ լեզւին:

1600 տարիներ առաջ Ս. Մեսրոպ Մաշտոց Աստծու օրհնութեամբ ու առաջնորդութեամբ ստեղծեց հայոց տառերը, հիմքը դրեց մեր գրաւոր գրականութեան ու մշակութային յաւերժական թագաւորութեան եւ այնուհետեւ հայոց լեզուն իր 36 տառերով եղաւ մեր ժողովրդի ինքնուրոյն դիմագիծը պահող, իր առաջ Աստծու խօսքը բացող եւ նրան յաւերժութեան առաջնորդող միջոց:

Մենք էլ այսօր կոչւած ենք մեր հայրերի օրհնակով յանձն առնելու մեր կապաւածութիւնը մեր լեզւին, այն սիրելու ամբողջական սիրով ու Լւիրումով ինչպէս ասում է բանաստեղծը.-

Քե՛զ, հայ լեզու, կը սիրեմ մրգաստանի մը նման...

Եւ դրանով ապրելու ուխտը վերանորոգենք, յիշելով Խաչիկ Դաշտենցից հետեւեալ խօսքը.-

Այս օտար աշխարհի ցուրտերին

Եկ սիրենք մեր լեզուն ջերմօրէն,

Եկ վառենք ու վառւենք հայերէն:

ՍԵՊՈՒՅ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ  
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՐՐԱՆԻ ՅԱՅՈՑ ԹԵՄԻ

## Հայոց լեզու

Դու մօր նման

Միշտ տուն կանչող,

Մայր հողի պէս

Միշտ կանաչող:

Թէ կորչէիր

Յանկարծ անհետ,

Ինչպե՞ս խօսեր  
Մայրս ինձ հետ:

## Մերոպ Մաշտոցին

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵԼՅ

Ո՛վ մեծագործ  
Մերոպ Մաշտոց  
Մեր առաջին  
-  
Բացած դպրոց,

Ամեն գիրդ՝  
Անձեթ ճրագ,  
Մեզ հայ պահող  
Անմա՛ր կրակ:

Մեր առաջին  
Լեզվի տաճար,  
Լուսապայծառ  
Յայոց հանճար:

Դու մեր Մեծ Պապ  
Յացիկ գիւղից,  
Մշոյ դաշտի  
Քաղցրիկ հողից:

Շրթունքներով  
Մեր մանկական  
Քեզ հազա՛ր փառք  
Յաւերժական:

### ԲԱՌ

Յանճար - իմաստութիւն, այստեղ՝ բարձր գիտութիւն ունեցող մարդ

## Այբուբեն հայոց

ՕՆՆԻԿ ՓԱՆԻԿԵԱՆ

Այբուբեն հայոց, գրե՛ր սրբաշէն,  
Երեսունեւութ զինւորներ հզօր,  
Դուք մեր բանակն էք անսպառազէն,  
Անյա՛ղթ, փառաւո՛ր:

Կուել էք անխոնջ դարեր շարունակ,

Յեզնել էք ամեն վտանգ ահալի,  
Ու միշտ անսահանջ՝ շահել յաղթանակ,  
Առանց մեկ գոհի:

Դուք մեր գանձն էք, ճոխ, անկողոպտելի  
Դուք շունչ էք, ոգի ու կեանք էք անմահ.  
Չի կարող ոչ մեկ ոսող ահռելի  
Պատճառել ձեզ մահ:

Այբուբեն հայոց, գրե՛ր սրբաշէն,  
Երեսունեութ զինւորներ հզօր,  
Դուք մեր բանակն էք անսպառազէն,  
Անյա՛ղթ, փառաւո՛ր:

### **ԲԱՌԵՐ**

անսպառազէն - անզէն  
անխոնջ - առանց յոգնելու, անդուլ  
հեզնել - ծաղրել, արհամարհել  
ահալի - վախ ազդող  
անսահանջ - առանց նահանջելու՝ յետ քաշելու  
ճոխ - առատ, հարուստ  
անկողոպտելի - ինչ որ կարելի չէ բռնի առնել՝ խլել  
ոսոխ - թշնամի

## Մեր լեզուն

ՀԱՍՕ ՍԱՅԵԱՆ

Մեր լեզուն մեր խիղճն է դա,  
Սուրբ հացը մեր սեղանի,  
Մեր հոգու կանչն է արդար  
Ու համը մեր բերանի:

Մեր լեզուն ծուխն է մեր տան,  
Մեր կշիռն աշխարհի մէջ,  
Նա աղն է մեր ինքնութեան,  
Էութեան խորհուրդը մեծ:

Մեր լեզուն արիւնն է մեր,  
Արիւնից աւելի թանկ,  
Մեր բուրմունքն ու գոյնն է մեր,  
Մեր լեզուն մենք ենք ու կանք:

Նա պիտի մեր առաջին  
Ու վերջին սերը լինի,  
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,

Որ այսքան մերը լինի:

### **ԲԱՌԵՐ**

կանչ- բարձր ձայն, ճիչ  
արդար- անմեղ, ազնիւ  
կշիռ- ծանրութիւն, քաշ, այստեղ՝ արժեք, կարելորութիւն  
ինքնութիւն- գոյութիւն, էութիւն  
էութիւն- մարդու հոգեկան աշխարհը  
խորհուրդ- միտք, իմաստ  
բուրմուկ- անուշ հոտ

-

## **Իմ հայ լեզու**

ՍԻԼԻԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Իմ հայ լեզու, իմ մայր լեզու,  
Իմ լոյսն ես դու, իմ ո՛ւժն ես դու,  
Մեր հին տունը՝ գանձերով լի,  
Դու գանձատան սուրբ բանալի:

Իմ հայ լեզու, իմ մայր լեզու,  
Իմ լոյսն ես դու, իմ ո՛ւժն ես դու,  
Լեզուների շքեղ շարքում  
Մնա՛ յաւերժ, մնա՛ կանգուն:

Իմ հայ լեզու, իմ մայր լեզու,  
Իմ լոյսն ես դու, իմ ո՛ւժն ես դու,  
Երդում եմ՝ քեզ պահել պայծառ  
Ու հասցնել դարերից դար:

### **ԲԱՌԵՐ**

գանձ - հարստութիւն, այստեղ գիտութիւն, գրականութիւն  
շքեղ - շատ գեղեցիկ, այստեղ մեծ հարուստ  
յաւերժ - միշտ, ընդմիշտ յաւիտեան

## **Խօսք իմ որդուն**

ՍԻԼԻԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

-Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպէս  
Սիրող քո մօր խօսքը սրտանց,  
Այսօրւանից յանձնում եմ քեզ  
Յայոց լեզուն հազարագանձ:

Կտրել է նա, հանց աստղալոյս,  
Երկինքները ժամանակի,  
Շառաչել է խռովայոյզ  
Սլացքի հետ հայկեան նետի:  
Եւ Մեսրոպեան սուրբ հանճարով  
Դարձել է գիր ու մագաղաթ,  
Դարձել է յո՛յս, դարձել դրօ՛շ,  
Պահել երթը մեր անաղարտ...  
Նրանով է մրմնջացել  
Յայ պանդուխտը վերքն իր սրտի,  
Նրանով է որոտացել  
Կռւի երգն իմ ժողովրդի,  
Նրանով է մայրս շահել  
Ինձ օրօրոց դրել մի օր,  
Յիմա եկել, քե՛զ է հասել  
Նրա կարկաչը դարաւոր...  
Բա՛ց շուրթերդ, խօսի՛ր անգի՛ն,

-  
Ժիր դայլայլի՛ր, իմ սիրասուն,  
Թող մանկանայ՛ քո շուրթերին  
Մեր ալեհե՛ր հայոց լեզուն:  
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ,  
Արարատի սուրբ ձիւնի պէս,  
Պահի՛ր նրան սրտիդ մօտիկ,  
Քո պապերի աճիւնի պէս:  
Ու ոտխի գարկիցը սել  
Դու պաշտպանի՛ր կրծքով նրան,  
Ինչպէս մօ՛րդ կը պաշտպանես,  
Թէ սո՛ւր քաշես մօրդ վրայ:  
Ու տե՛ս որդի՛ս, ո՛ւր էլ լինես,  
Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,  
Թէ մօ՛րդ անգամ մտքից հանես,  
Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս...

**ԲԱՌԵՐ**

պատգամ- պատուեր, կտակ  
հազարագանձ- հազարաւոր գանձեր ունեցող, շատ հարուստ  
հանց աստղալոյս- աստղից արձակւող լոյսի նման  
խռովայոյզ- ալեկոծւած, յուզւած  
անաղարտ- մաքուր, վճիտ, ջինջ  
մրմնջալ- ինքնիրեն՝ ուրիշների համար ոչ լսելի ձայնով խօսել  
կարկաչ- հոսող ջրի ձայն, այստեղ՝ լեզւի ձայնը, խօսքը  
աճիւն - մոխիր, հող, փոշի (փթած մարմնի), նաեւ՝ յիշատակ

**13 - Տառերն հայոց**

ՉՈՅՐԱՊ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Երբ ծնւեցին, ոտքի ելան ու շարւելով իրար կողքի՝  
-Իմաստութի՛ն սիրեք,- ասին մեր նորածին տառերն հայոց:  
Երբ անողոք, բիրտ թշնամին խուժեց երկիրը մեր հայոց,  
-Միշտ իմացեալ մահով մեռեք,- պատգամեցին տառերն հայոց:

Դար ու դարեր թալանւեցին, հրկիզւեցին գրքերը մեր,  
Ու բոցերից նորից ելան, գիւնոր դարձան տառերն հայոց:  
Եւ հիմա էլ վերածնւած ու դարերի հրով օծւած՝  
Խաղաղ կեանքի, յաւերժ երթի երգ են գրում տառերն հայոց:

## ԲԱՌԵՐ

անողոք- դաժան  
բիրտ- կոպիտ, դաժան  
երթ - առաջընթաց, ուղեւորութիւն  
խուժել - արշաւել, յարձակում գործելով մտնել մի երկիր  
հրկիզել - այրել

## Լաւագոյն նւերը

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՅ

Յինգ տարեկան մի բալիկ  
Լաց է լինում ամեն օր,  
Էլ չի ուզում խաղալիք,  
Ինչ-որ բան է ուզում նոր:

Էլ չի ուզում խաղ ու միրգ,  
Մայրն ի՞նչ տայ, որ լաւ լինի...  
Տալիս է մի սիրուն գիրք,  
Այբուբենը մայրենի:

Եւ մանկիկը երջանիկ  
Ընդունում է այն սիրով...  
Ա՛խ, իմ բալիկ, իմ ջանիկ,  
Գո՞հ ես այդ նոր նւերով:

Դրանից լաւ նոր նւեր,  
Դրանից լաւ ոչ մի բան՝  
Ոչ մի մայր էլ չի տւել  
Աշխարհի մէջ իր մանկան:

## Մեր այբուբենը

ԳԵՈՐԳ ԷՍԻՆ

Այբուբեն չէ սա՛

Բերդ է անմատոյց,  
Գանձ է աննւաճ:

Դուռ է փրկութեան,  
Ելք, երբ յոյս չկայ,  
Չարթօնքի նւագ:

Էութիւնն է մեր,  
Ընթացքն ու ուղին,  
Թագ ու զօրավար.

Ժողովող մի կանչ,  
Իմաստուն խորհուրդ,  
Լինելու հնար:

Խունկը խորանի,  
Շնողը բանի,  
Կնիքն ինքնութեան.

Հանց հանապազօր հայի սեղանի,  
Ձիրքերի հնձան:

-

Ղօղանջը երգի, դէկը ընթացքի,

Ճեմարան ճառի,  
Մարգարան մտքի, մատեան հաւատքի,  
Իւղ անմար ջահի:

Նախահիմքն է մեր,  
Շողը մեր յոյսի,  
Ոգին մեր ճարտար.

Չինարին այգու,  
Պարիսպը մեր տան,  
Ջրաղացն արդար:

Ռումբն է մեր ռազմի,  
ռունգը բնագոյի  
ռահւիրան կեանքի:

Սերն ու սիրտն է մեր,  
սերմը՝միշտ ծլող,  
Վեմ ու վիմագիր:

Տունը՝ցամաքում,  
տապանը՝ ջրում,  
Րոպէն՝ սլացքում:

Ցորեանը՝ արտում,



Ուղին՝ անյայտում  
Փառքը՝ սխրանքում:

Քիստն ու քաղն է մեր,  
քանքար ու քնար,  
քարաւան ու ափ:

Ե՛ր  
Օջախն անմար,  
օժիտն անհատնում  
ՖԷ-ից մինչեւ Այբ:

## ԲԱՌԵՐ

անմատոյց - անմատչելի, որին հնարաւոր չէ մօտենալ  
խունկ- բուրաւետ խեժ, որ այրում են կրօնական արարողութիւնների  
ժամանակ բուրաւետ ծուխ ստանալու համար:

խորան - եկեղեցու բեմի մաս, կամարակապ հատւածներ նրա աջ եւ ձախ  
կողմում

բան - խօսք

հանապազօր - ամեն օր, ամենօրեայ

հնձան - շինութիւն այգում՝ յատուկ աւազանով, ուր խաղող են ճմլում գինի  
պատրաստելու համար

-

ռահվիար - առաջնորդ, սկզբնաւորող

վեմ - քարաժայռ

վիմագիր- քարի վրայ գրած

տապան - գերեզման, շիրիմ, այստեղ՝ մեծ արկղածեւ կաւ (Նոյեան տապանից)

քանքար - տաղանդ, մեծ ունակութիւն

## Հայոց լեզուն (Կրճատումներով)

ՆԱՅԻՐԻ ՉԱՐԵԱՆ

Արի, եղբայր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն,  
Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար հայոց լեզուն:

Հոսել է կա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,  
Արաքսի պէս միշտ կենդանի, միշտ անսպառ հայոց լեզուն:

Նա առաջին կանչն է եղել դիւցազնական մեր նախահօր,  
Օրօրոցից մեզ փայփայել է մայրաբար հայոց լեզուն:

Քերթողահայր հորեւացուց մինչեւ Քուչակն ու ձեր ծառան  
Տւել է մեզ երազ ու երգ եւ ճանապարհ՝ հայոց լեզուն:

Կը մոլորուէր մեր քարաւանն ամպրոպաշունչ գիշերներին,

Կը կորչէիք, եթէ ճամբին չբոցկլտար հայոց լեզուն:

Ուրեմն եկ՝ փառաբանենք ու փայլեցնենք թրի նման,  
Որ զրնգայ արեւի տակ յաւետ պայծառ հայոց լեզուն:

## **ԲԱՌԵՐ**

անսպառ - անվերջանալի  
քերթող - բանաստեղծ

## **Հայերէն (Մի հայուն հոլ)**

ՆԱՅԻՐԻ ՉԱՐԵԱՆ

Ինչո՞ւ չես խօսում հայերէն...  
Ես երգ եմ հիւսում քեզ համար,  
Յօնքերդ հպարտ ու կամար  
Իջնում ես հայոց լեռներէն,  
Ինչո՞ւ չես խօսում հայերէն:

Ես երգ եմ հիւսում քեզ համար,  
Դու չես հասկանում իմ լեզուն:  
Ես խորթ եմ, օտար քո հոգուն,  
Բայց քո տեսիլքով խանդավառ՝  
Ես երգ եմ հիւսում քեզ համար:

Յօնքերդ հպարտ ու կամար  
Հանց վեհ տաճարներ հայոց,  
Հայեացքդ մաղում է ամառ,  
-  
Հայկից ես աչքերդ քո բոց,  
Յօնքերդ հպարտ ու կամար:

Իջնում ես հայոց լեռներէն,  
Ինչպէս թեթեւօտ մեր պախրան,  
Նազանքդ այնպէս նայիրեան,  
Հմայքդ այնպէս հայերէն՝  
Իջնում ես հայոց լեռներէն:

Ինչո՞ւ չես խօսում հայերէն:  
Նորքից ես թռել դու, իմ լոր,  
Չանգուն է երգել քեզ օրօր,  
Մասիսն է հսկել վեհօրէն,  
Ինչո՞ւ չես խօսում հայերէն...

## **ԲԱՌԵՐ**

հիւսել - գործել, այստեղ՝ գրել  
տեսլիք - այստեղ՝ արտաքին գեղեցկութիւն  
խնդավառ - հիացած, ոգեւորւած  
հանց - ինչպէս  
մաղել - այստեղ՝ ցրել, տարածել

թեթևոտ - թեթև քայլածք ունեցող

## Մայրենի լեզու

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԱԶԱՐԵԱՆՑ

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,  
Ախորժ, ընտանի իմ հոգու համար.  
Առաջին դու խօսք, ականջիս հասած,  
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօղած,  
Մանկական լեզվիս թոթովանք տկար,  
Յնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Ո՛հ, ինչպէս պղտոր էր սըրտիս օրը,  
Երբ պանդուխտ էի օտարի տանը,  
Եթէ հարկ էր ինձ այլազգի լեզուվ  
Իմ միտքը յայտնել օտար բառերով,  
Որ երբեք սիրել կարելի չէ ինձ,  
Որ ձայն ողջոյնի բնաւ իսկ չեն ինձ:

Գեղեցիկ լեզու, հրաշալի՛ լեզու,  
Այդ ինչպէս քաղցր հնչում ես ինձ դու...  
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ  
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.  
Ասես թէ ահա կանչում էին ինձ  
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Յնչիր դու, հնչիր այժմ ու յաւիտեան,  
Մայրենի՛ լեզու, բարբառ սիրական,  
Արի՛, բարձրացի՛ր հնուրեան փոշուց,

-

Դու իմ հայ լեզու, մոռացած վաղուց,  
Զգեցի՛ր, նոր կեանք սուրբ գրւածքներով,  
Որ ամենայն սիրտ վառւի քո սիրո՛վ:

### ԲԱՌԵՐ

ախորժ - դուրեկան

յօղած - բառ, խօսք, կարճ գրւածք

կամիմ - ցանկանում եմ

զգեցիր - հազցրիր, այստեղ՝ տւեցիր, նւիրեցիր

## Բարբառ մայրենի

ՍԱՐՄԵՆ

Քանի աշխարհում կայ Արարատ սար,  
Ճակատին Յայոց փառքն արեւավառ,  
Ո՛չ մի ահեղ ձեռք քեզ չի սասանի,  
Մեր սրտից կերտւած՝ բարբա՛ռ մայրենի:

Քանի կայ հողը մեր հայրենական,  
Կան ծաղկունքն անշէջ, ժպիտը մանկան,  
Պիտ շողաս նման վառ ծիածանի,  
Բիւրեղեայ քերթւած՝ բարբա՛ն մայրենի:

Քանի Արաքսը կերթայ դէպի ծով՝  
Մերթ ծիծաղելով, մերթ լուռ թախիծով,  
Պիտի բարկ պահես յոյսն Յայաստանի,  
Մեր արեամբ զօղւած՝ բարբա՛ն մայրենի:

Քանի աստղերի թարթիչների տակ  
Կը ծփայ Վանայ ծովը կապուտակ,  
Պիտի դողանջես ջերմ ու կենդանի,  
Զօրացած, գտւած՝ բարբա՛ն մայրենի:

Քանի մեր երգը հնչում է հզօր,  
Եւ հայ մայրերը երգում են օրօր,  
Քո ամենագօր լոյսը չի հատնի,  
Մեր հոգում ջահւած՝ բարբա՛ն մայրենի:

Քանի Դաւիթ պէս Կայծակը ձեռին՝  
Պաշտպան ենք կանգնել Յայոց լեռներին,  
Դու երբեք, երբեք, երբեք չես մեռնի,  
Մեր յոյս, մեր հաւատ՝ բարբա՛ն մայրենի:

## **ԲԱՌԵՐ**

սասանել - դողալ, այստեղ՝ լռել

անշէջ - ահանգչելի

մերթ - երբեմն

թախիծ - տխրութիւն

բարկ - այստեղ՝ թէժ, վառ

-

զօղւած - այստեղ՝ ամրացւած

հատնել - վերջանալ

ջահւած - լուսաւորւած

## **Օջականում**

**ՍՈՂՈՍՈՆ ՏԱՐՕՆՑԻ**

Այստեղ հանճա՛րն է հանգչում. յաւերժական լռութիւն՝  
Ընկղմած խոր լռութեան ժամանակի մէջ անծայր,  
Մեսրոպ, սրտի հուր կանթեղ, մտքի անդուլ արթնութիւն,  
Մեր դպրութեան հզօր Յայկ, ժողովուրդիս պէս պայծառ:

Այս պաղ, անդորր մատուռում՝ միայն յաւերժն է արթուն -  
Յսկում քեզ, Մեծ ընթերցող, հսկայ պապդ ոսկեբառ.  
Բայց բարբախում ես դու յար եւ ծերունու հին սրտում,

Եւ մանկան նոր սրտի մէջ - արեւի պէս մշտավառ:

Ահա մի ողջ տքնաջան եւ քաջասիրտ ժողովուրդ,  
Որպէս երկինք, տառում է քո արեւը դարից դար,-  
Քո լոյսի հետ, լոյսիդ մէջ,- մի սրեունդից մի սերունդ:

Յանգի՛ստ քեզ, օ՛ր, բանի սիրտ, մտքի սէ՛ր եւ մխիթար,  
Ահաւասիկ քո սրտով ու քո մտքով մշտաբոց՝  
Երկրէ-երկիր է թելում հանճարեղ հուրը Յայոց:

## **ԲԱՌԵՐ**

ընկղմել - խորասուզել  
անդուլ - անդադար  
անդորր - խաղաղ  
յաւերժ - մշտական, անմահ  
տքնաջան - աշխատասեր  
թելել - թռչել, թելերը շարժելով թռչել

## **Տաղ հայերէն լեզվին**

ՎԱՅԱՆ ԹԵՔԵԵԱՆ

Քե՛զ, Յայ՛ լեզու, կը սիրեմ մրգաստանի մը նման...  
Մեր անցեալի թանձրախիտ սուրբներուն մէջ կարծես  
Մէյմէկ պտուղ՝ քու բոլոր բառերդ ինձի կերելան,  
Որոնց մէջէն կը քալեմ ու կը քաղեմ զանոնք ես:

Մրգաստանի մը նման կը սիրեմ քեզ, Յայ՛ լեզու...  
Մեր հայրենի պալատէն, պարտէզներէն մընացորդ՝  
Դալարագեղ դուն պուրակ, որ դիմացար դարերու  
Եւ կը մնաս միշտ առոյգ, հին աւիշովդ կենսայորդ:

Ծառերուդ մէջ հովանուտ կերթամ խիսդով մանսահման,  
-

Արմատներուդ, ճիւղերուդ վրայ նայելով հիացիկ,  
Չարմանալով թէ ինչպէ՛ս դուն մնացիր, երբ սաստիկ  
Քամին քու շուրջդ փչեց եւ տապալեց ամէն բան:

Մէյմէկ պտուղ գոյնզգոյն՝ ամբողջ բառերդ ահա՛,  
Յիւթեղ բառերդ, զոր որքա՛ն հասունցուցին արեւներ,  
Բառերդ, որոնք այս պահուս շրթանցս վրայ եմ բռներ,  
Բառերդ, որ քիմքս կօծեն եւ կը սփոփեն սիրտս հիմա...

## **ԲԱՌԵՐ**

մրգաստան - պտղատու ծառերի պարտէզ  
թանձրախիտ - շատ թանձր, շատ խիտ  
դալարագեղ - կանաչութիւնով գեղեցկացած  
պուրակ - փոքր անտառ, ծառաստան

աւիշ - հեղուկ նիւթ, որ սնուցանում է մարմինը կամ ծառը  
կենսայորդ - կեանքով յորդուն, կենսաբուխ  
հովանուտ - սոււերոտ, զովասուն  
խինդ - խնդութիւն, ուրախութիւն

## Հայոց լեզու (Մի հայրենադարձ պատանու)

ՅՈՎՅԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Մտրոպ Մաշտոցն ասաց՝ որդիս  
Էլ ինչո՞վ ես յոյսը բերդիս.  
Էլ հայրենիք ինչո՞ւ եկար,  
Թէ պիտ խօսես օտար լեզուով,  
Կենաց կանչես օտար լեզուով,  
Քաղես Հայոց վարդերն ու հեզ՝  
Աղջիկ կանչես օտար լեզուով:

Իրաւ, քանի լեզու գիտես,  
Այնքան մարդ ես, իրաւն ասին,  
Բայց որ քո հայ լեզուն չունես,  
Էլ ի՞նչ յոյս ես քո Մասիսին,  
Որ թողել ես քո մայրենին՝  
Հարամ է քեզ հայոց գինին,  
Հարամ է քեզ աղջիկն հայոց,  
Հայոց սիրտը՝ Մասիսն հայոց,  
Մայր հայրենին էլ ի՞նչ սրտով  
Քո ոտքերն էլ գրկէ վարդով...  
.... Ա՛խ, չէ, Մասիսն հալալ է քեզ,  
Հայոց վշտում դու մեղք չունես,  
Հալալ է քեզ հողն հայրենի,  
Թող քեզ ջուրն էլ դառնայ գինի:  
Քանզի հայոց վայ սփիւռքում  
Պանդուխտութիւնն է դեռ պոկում  
Հայ բերանից հայոց լեզուն,  
Օտարն հայոց մահն է ուզում,  
Բայց նա հայ է, ով յովազի

-

Արնախում երախումն էլ  
Իր մայրենի լեզուով խօսի,  
Մօր կաթի հետ ծծած լեզուով,  
Որ հայ գետը ծով ծնի-ծով,  
Ժխորում էլ Բաբելոնի-  
Խօսի լեզուով իր մարյենի,  
Հայոց լեզով, որ միշտ ջահել  
Մեզ բիւր դարեր հայ է պահել:

## ԲԱՌԵՐ

Նեկտար - անմահութիւն պարգեւող խմիչք  
հեզ - խոնարհ, համեստ

Ժխոր - աղմուկ, աղաղակ

## Քառեակներ Հայոց լեզուապահումի

ՅՈՎՅԱԼԵՍ ՇԻՐԱԶ

Ի սեր երգիս անմահութեան՝ Մաշտոց հայր էր հարկաւոր,  
Ի սեր ազգի՝ Վարդանի պէս զոհող այր էր հարկաւոր,  
Սփիւռքներում, աշխարհով մէկ, հայոց լեզւի փրկութեան  
Ամենօրեայ հազար ու մէկ Աւարայր էր հարկաւոր...

\* \* \*

Մեծ Մաշտոցի յաւերժաթուր գրի նման կը շողայ,  
Մասիս, ձիւնդ Անդրանիկի թրի նման կը շողայ,  
Անդրանիկը ելաւ չարի սել մոռացման պատեանից,  
Ախ երբ պիտի դու էլ ելնես, յոյսն անսահման կը շողայ:

\* \* \*

Օշականի անմահ մեռեալ, էլ քո մահից կախւած չես,  
Ծնւում՝ ամէն ծնողի հետ՝ ոչ մի հողի շաղւած չես,  
Ամէն մի հայ օրոցքի հետ օրօրում ես յաւիտեան,-  
Քո շիրմին էլ չեմ հաւատում, մի վայրկեան էլ թաղւած չես:

\* \* \*

Աստուծոյն յաճարի հետ թէ ամրոցը չլինէր,  
Թէ ամրոցի ամրոց՝ գրոցն ու բրոցը չլինէր,  
Դեռ էն գլխից կը ցամաքէր Սեւանն ու Վանն էլ վրան,  
Մաշտոցն ինքն էլ չէր յաւերժի թէ՛ Մաշտոցը չլինէր...

## Մեր լեզուն

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,  
Առնական է, կոպիտ, բայց միեւնոյն պահին  
Պայծառ է նա, որպէս մշտաբորբոք փարոս,  
Վառւած հրով անշէջ դարերում հին:

Եւ վարպետներ, խոնարհ ու հանճարեղ,  
Յղկել են այն դարեր, որպէս մարմար,  
Եւ փայլել է նա մերթ, ինչպէս բիւրեղ,

-

Մերթ կոպտացել, ինչպէս լեռնային քար:

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին,  
Եւ եթէ մենք այսօր կոտորատում ենք այն մերթ-  
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր  
Նոր խոհերի վրայ ժանգ չչոքի:-

Այդ նրանից է, որ այսօրւայ ոգուն  
Այլեւս չի կարող լինել պատեան,

Ոչ Տերեանի բարբառը նւագուն,  
Ո՛չ Նարեկի մրմունջը մագաղաթեայ:

Եւ ոչ անգամ Լոռու պայծառ երգիչ  
Թումանեանի բարբառը գեղջկական,-  
Բայց նա կը գայ- լեզուն այս երկաթեայ բերքի  
Եւ խոհերի այս խո՛ր ու երկրակամ...

## ԲԱՌԵՐ

առնական - մարդկային, ամուր  
փարոս - ուղեցոյց, ճանապարհ ցոյց տուող  
խոհ - մտածմունք

## «Եւ այր մի՛ Մաշտոց անուն.... (Յատուած)

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Այսպէս էլ ծնւեց մէկը նրանցից,  
Ծնւեց Նա՛  
Այր մի՛  
Մաշտոց անունով,  
Եւ նա չծնւեց, որ անելացնի  
Հարց տուողների քանակն անպակաս:  
Նա եկաւ աշխարհ՝ պատասխանելու,  
Եւ պատասխանը գտաւ իսկապէս...

... Քաջերի սահմանն իրենց զէնքն է հէնց,  
Քաջեր միշտ էլ կան,  
Չէ՛նք է հարկաւոր:

Քաջեր միշտ էլ կան,  
Պէտք է ասպարէզ:

Եւ նա էր ահա, որ ձեւաւորեց  
Մի զէնք ժանգախոյս,  
Ե ծովաւորեց  
Ասպարէզ մի նոր,  
Ուր թոյլ-ուժեղի,  
Շատ ու սակաւի,  
Քիչ ու բազումի

-

Մրցութեան համար ասպարէզ չկա՛յ,  
Քանզի նորատիպ այդ մաքառման մէջ  
Այրուծիի տեղ մտքերն են կռւում,  
Թանաք է յեղւում արեան փոխարէն,  
Եւ յաղթանակը կոչւում է մատեան....

Մենք կայնիք, այո՛, նրանից առաջ:



Սակայն նա ծնւեց,  
Որ գայ ու դառնայ ինչ-որ նոր սկիզբ:

...Նրանից առաջ կային աստուածներ՝  
Երկնքի, սիրոյ, պտղաւորումի,  
Ինչպէս փոթորկի, նաեւ... դպրութեան:

Եթէ բոլորը՝ մինչեւ իսկ ստոյգ,  
Վերջինս սուտ էր, սուտ ստուգապէս.  
- Աստուած կար, սակայն դպրութիւն չկա՛ր:  
Նա՛ հաւատաւորն իր նոր հաւատի,  
Դպրութեան մեր սուտ աստծուն վռնկեց  
Եւ ինքը մնաց նրա փոխանակ:  
Բայց մինչ դպրութեան հին աստուածը մեր  
Շարունակ միայն մի գործ էր անում՝  
Մարդկանց հոգին էր առնում ու տանում,  
Սա եկաւ, որ մեզ հոգի՛ պարտէի...

Այո՛, մենք կայինք նրանից առաջ.  
Հօր թէ տկար՝  
Մարմին էինք մենք:

Սակայն նա եկաւ, որ հոգի՛ դառնայ,  
Շօշափւո՛ղ հոգի,  
Եւ անմե՛ռ հոգի:

Այո՛, մենք կայինք նրանից առաջ.  
Քիչ թէ շատ՝ կար հաց,  
Եւ ունինք ջուր:  
Սակայն նա ծնւեց, որ Սնունդ դառնայ:

Ծնւեց, որ ծնենք,  
Եկաւ, որ լինենք,  
Եւ անմահացաւ,  
Որ անմահանանք...

## **ԲԱՌԵՐ**

այր - տղամարդ  
Ժանգախոյս - չժանգոտող  
ծովաւորւել - ծովի նման խոր ու անսահմանափակ դառնալ  
յեղել - թափել  
ստոյգ - ճիշտ

## Մայրենի լեզու

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Դու մեր մեծ երթի գաւազանակիր  
Եւ մեր պատմութեան մեծագոյն դիւան,

Մեր ազնուութեան գովասանագիր,  
Մեր մտքի պահեստ, հոգու օթեւան:  
Անցեալին պարզւած դու մեր լսափող,  
Եւ մեր խօսափող՝ գալիքին ուղղւած:  
Դու մեր սրբութիւն կնքւած Մեսրոպով,  
Նարեկացիով օծւած ու իւղւած:

Դաժան դարերի ամեն մի ժամին  
Շատ բան է խլել մեզնից թշնամին:

Բարդելով վերքին վերք ու անարգանք,  
Յեծութեան վրայ մի նոր հեծութիւն՝  
Խլել է մեզնից հանգիստ ու յարգանք,  
Խլել է մեզնից փառք ու մեծութիւն,  
Խլել կեանքը մեր եւ... կեանքի՛ց էլ թանկ  
Մեր հո՛ղը, հո՛ղը,  
Մեր սուրբ հայրենի՛ն:

Շա՛տ բանից է մեզ զրկել վայրենին:  
Մեր կերած հացին քսել է նա ժանգ,  
Բայց եւ.. դարաւոր բնիկ վայրերի  
Կորստի լեղի կարօ՛տն է քսել,  
Մեր խումբին խառնել մեր սուրբ մայրերի  
Արցունքը, սակայն... եւ արիւնը սեւ,  
Բայց մենք չենք զրկւել... մեր բերնի համից.  
- Քաղցրացել ենք մենք... մեր քաղցր բառով,  
Մեր հայրենահամ անուշ բարբառով:

Շատ բանից է մեզ զրկել թշնամին:  
Իր ձեռքով նա մեր ձեռքերն է հատել,  
Յատել է ականջ ու ոտնաթաթեր,  
Աչքեր է հանել դաշոյնով իր սուր,  
Կտրել է նաեւ արմատից լեզուն,  
Եւ սակայն... ի գո՛ւտ.  
Չի՛ հատուել լեզուն,  
Մնացել է նա՝ հատուելով անգամ...

Քեզ մեր հայկական եւ արամական,  
Չկարողացան քեզ խլել մեզնից  
Ո՛չ խարդաւանքով արամեական,  
Ո՛չ բիւզանդական սիրով անազնիւ,  
Ո՛չ Ահրիմանի ահեղ նետերով,  
Ո՛չ ճշմարտութեամբ,  
Ո՛չ էլ սրտերով:

Չկարողացան քեզ մեզնից խլել:  
-  
Եւ պարզ է հիմա, յստակ ու որոշ,  
Որ չե՛ն էլ կարող խլել քեզ մեզնից,

Ինչպես չեն կարող խլել մի դրօշ,  
Որ հազարամեայ դաժան մարտերում  
Փողփոցացել է միշտ էլ... սրտերում:

Ո՛չ, քեզ ո՛չ մեկը կուլ տալ չի՛կարող.  
Ազահ կոկորդում դու խոր ես խլում:  
Ո՛չ, քեզ ո՛չ մեկը փուլ տալ չի՛ կարող,  
Ինչպես երկինքը երբեք չի փլում:  
Չե՛ս խլի երբեք,  
Չե՛ս փլի երբեք,  
Ինչպես արինից գոյնը չի խլում..  
Եւ ի՞նչ խաչագող դեռ պիտի հասնի,  
Որ քեզ կամենայ գողանալ մեզնից.  
(Մի ասա «մեզնից», «աշխարհից» ասա)  
Չե՞ որ դու հիմա ո՛չ միայն լեզու,  
Այլեւ մասունք ես,  
Մասունք ես մի սուրբ,  
Անկողոտպտելի մասունք սրբազան՝  
Դարերի խորքից դարերին հասած:

Մասունք: Ինչպե՞ս թե: Մասունքս ո՛րն է:  
Մասունքի տեղը տուփն է կամ հորն է:  
Իսկ դու՝ դարաւոր, բայց եւ առոյգ ես,  
Գիսաւոր ծուխ ես, բայց եւ խարոյկ ես,  
Ինչքան պարզ՝ նոյնքան ասպետական ես,  
Շատերի մէջ ես, բայց պետական ես,  
Եւ դրանով իսկ դու պետքական ես  
Այն պետութեանը, որ վաղը պիտի  
Լուսնից ու Մարսից ինքն իրեն դիտի...

## **ԲԱՌԵՐ**

դիւան - գրածքները պահելու տեղ  
օթեւան - գիշերելու տեղ, իջեւան  
լսափող - ընկալուչ  
խում - խմիչք-խմելիք  
խարդաւանք - դաւադրութիւն, խաբէբայութիւն  
մասունք - սրբերի ոսկորների մասեր, այստեղ թանկագին յիշատակ  
գիսաւոր - երկար մազեր ունեցող

## **Յայ լեզուն տունն է հայուն**

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

Յայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,  
Ուր կը մտնէ ամեն հայ իբրեւ տանտեր հարազատ,  
Կըստանայ սեր ու սնունդ, սրտի հպարտ ցնծութիւն  
Եւ բորեանէն ու բուքէն հոն կը մնայ միշտ ազատ:

-

Քանի՛ դարեր եւ քանի՛ ճարտարապետ հանճարներ  
Աշխատեցան անոր տալ վեհութեան, գեղ ու պերճանք,  
Քանի՛ գեղջուկ բանւորներ տքնեցան տիւ ու գիշեր,  
Որոնք թաղւած են հիմա մոռացութեան մութին տակ:

Մշտանորոգ ու միշտ հին՝ ան կը տեւեւ դարեդար,  
Իր ճրագները՝ միշտ լոյս, իր օջախին հուրը՝ վառ,  
Բարիքներով անսպառ լեցուն ամբարն ու մառան:

Յոն է միայն, որ կրնայ գտնել ամեն հայ կրկին  
Խաժամուժին մէջ օտար կորսնցուցած իր հոգին,  
Անցեալն անհուն եւ ներկան, նոյնիսկ մթին ապագան...

## ԲԱՌԵՐ

- |                   |                 |
|-------------------|-----------------|
| 1. ծագերուն       | այստեղ՝ ծայրերի |
| 2. բորեան (բորան) | սառնամանիք      |
| 3. գեղ            | գեղեցկութիւն    |
| 4. պերճանք        | շքեղութիւն      |
| 5. տիւ ու գիշեր   | օր ու գիշեր     |
| 6. խաժամուժ       | ամբոյս          |

## Մեսրոպաբոյր

ՉԱՐՅԱՏ

Խունկ կը բուրեն,  
Որդան կարմիր ու մագաղաթ կը բուրեն.

Վանք կը բուրեն,  
Ապաշխարանք կը բուրեն,  
Ծոմ ու Նարեկ - աղօթք ու ողբ ու շարական  
կը բուրեն:

Մահ կը բուրեն,  
Յերոսամարտ ու նահատակ կը բուրեն,

Արեւ ու արտ կը բուրեն.  
Վարդ ու սոխակ - Սայեաթ Նովա ու  
Կոմիտաս կը բուրեն:

Կեանք կը բուրեն,  
Վերագարթնում ու յաղթանակ կը բուրեն,

Ու որ ըլլան հողմացրիւ ուր որ գաղթեն -  
վարդապէ՛տ

Քու տառերդ ազատութիւն կը բուրեն:

## Ներքող մայրենի լեզւին

ՎԱՐԱԳՆ ԴԱԹԵԱՆ

Դու սեր առաջին, առաջին մորմոք, առաջին աղօթք,  
Որ տառապանքով փոխւեցիր բառի ու դարձար լեզու...  
Ու երբ «Յայրենիք» անունը տւինք հողին այս քարոտ,  
«Մայրենի» դրինք անունը քո սուրբ...

Եւ դու դարեդար մեզ շնորհեցիր կանչը քո արեան,  
Յամը քո հացի, եռքը քո գիւտ, ցոլքը քո հրի,  
Տւիր պղնձէ այս քարափների կռիւնք վայրագ  
Ու քնքշութիւնը լացող մամուռի:

Մեզ նաւասարդեան առաւօտների լոյսով օժեցիր  
Եւ մկրտեցիր առասպելների ուժ ու զօրութեամբ,  
Աստուածների հետ քո աստուծային լեզուով խօսեցիր,  
Ոսոխների հետ որոտով քո բամբ:

Ու մենք դարձրինք քեզ երդում, ոգի, դարձրինք Աստուած,  
Թէեւ գիտէինք, որ աստուծները զոհ են պահանջում,  
Եւ աւարայրում ընկանք արնաքամ, ընկանք ծւատած,  
Բայց չզիջեցինք եւ ոչ մի հնչիւն:

Ու երբ փուլ եկաւ մեր կամարների թռիչքը հպարտ,  
Կամար ոգեղեն՝ դու մեր ոգու հետ յարատեւեցիր,  
Երբ սիւները մեր ծնկները ծալած ընկան դիտապաստ,  
Դու՝ սիւն հրեղեն, երկինք թելեցիր:

Երբ ողկոյզը մեր առան արշաւող սմբակների տակ,  
Գինի սրբազան՝ մեր շրթունքները դու համբուրեցիր,  
Ու երբ խլեցին ու խափանեցին թոնիրը մեր տաք,  
Դու՝ հաց անսպառ, նորից բուրեցիր:

Եւ մենք քեզ համար, մեր մեսրապատառ, խորհուրդ մեր  
խորին,

Եւ մենք քեզ համար մեր մեծասքանչ, մեր  
ոսկեղենիկ,

Ելանք ազգովին, բռնեցինք ահեղ ճամբան Դեր-Չորի,  
Մեր կեսը տւինք, բայց քեզ չտւինք:

Քանզի գիտէինք, որ քեզ սրբօրէն կոչել մայրենի,  
Քեզանով ենք մենք դարեդար յառնել, առել շունչ ու կեանք  
Ու թէ քեզ դաւենք, ուրեմն չունենք հող ու հայրենիք,  
Ու թէ քեզ դաւենք, ուրեմն չկանք:

Եւ հիմա, հիմա, անթեղի նման քեզ պիտի տանենք,  
Քեզ պիտի տանենք իբրեւ հրդեհից ազատած մանկան,

Յողմերից փրկւած կանթեղի նման քեզ պիտի տանենք  
Եւ տանենք իբրեւ երդում ու պատգամ:

-

Եւ տանենք պիտի իբրեւ առաջին հաւատ ու աղօթք,  
Եւ տանենք պիտի իբրեւ սրբազան հաց, գինի ու հուր...  
Եւ յիշենք, որ երբ «Յայրենիք» ասինք հողին այս քարոտ,  
«Մայրենի» դրինք անունը քո սուրբ:

## ԲԱՌԵՐ

մորմոք	կսկիծ
Ոսոխ	թշնամի
ծւատւած	պատառ-պատառ եղած
դիտապաստ	սպանւած՝ գետին գլորւած
յառնել	բարձրանալ, կենդանանալ
անթել	մոխիրի տակ ծածկւած կրակ

## Մայրենի լեզուն

ՎԱՅԱԳԸ ԴԱԻԹԵԱԸ

Իմ մայրենի, իմ բարբառ, կրակի՛ հետ արարել,  
Կրակի պէս սրբազան քեզ դարեր եմ տարել:

Վառել եմ բոցը քո շէկ ես եղեգան փողն ի վեր,  
Որ աստուածներ դու ծնես՝ բոցամօրուս ու հուրիներ:

Եւ մայրենի կաւածեփ խուղերում եմ վառել քեզ,  
Որ ծխանի ծխի հետ յաւերժօրէն երկարես...

Իմ մայրենի, իմ բարբառ, քեզ հացի՛ հետ արարել  
Եւ հացի պէս սրբազան քեզ դարեր եմ տարել:

Քարից քամած ցորեանիս համն ու հոտն եմ  
տւել քեզ,  
Որ անսպառ լինես դու այն օրինւած հացի պէս:  
Որ հեռաւոր ճամբէքին՝ օտարութեան ու քաղցի,  
Դու շուրթերիս մերձենաս հաղորդութեան պէս հացի:

Իմ մայրենի, իմ բարբառ, քեզ գինո՛ւ հետ արարել  
Եւ գինու պէս սրբազան քեզ դարեր եմ տարել:

Ու քեզանով արբեցած, դարձել տրտունջ ու բողոք,  
Ծառն եմ եղել երկնքի գահերի դէմ անողոք:

Ես քեզանով իմ հոգու լոյսն ու խաւարն եմ հունցել  
Ու կապոյտի, անյայտի, յաւերժի հետ զրուցել:

Իմ մայրենի, իմ բարբառ, աշխարհում ինչ էլ լինի՝  
Դու իմ կրակ, դու իմ հաց, դու սրբազան իմ գինի...

## ԲԱՌԵՐ

արարել	ստեղծել
-	
հուրիեր	կրակի մազերով
խուղ	խրճիթ
մերձենալ	մօտենալ
հունցել	լաւ ծեծել, տրորել

## Յայերէն

ԽԱԶԻԿ ԴԱՇՏԵՆՑ  
(երգ սփիւռքահայի)

Մեր շուրջը լեզուներ նոր ու հին,  
Մեր շուրջը խօսում են այլօրէն,  
Եկ խօսենք, եղբայր իմ,  
Յայերէն,

Կուլ չերթանք այս ահեղ լափումին,  
Թոյլ չտանք մեր լեզուն աներէն,  
Եկ խօսենք, մի՛շտ խօսենք  
Յայերէն:

Մենք ունենք աշխարհում Մասիս սար,  
Այդ սարը գալիս է դարերէն,  
Նա անվերջ խօսում է  
Յայերէն:

Զաւակիդ Յայկազեան դպրոց տար,  
Եկ գրենք Մեսրոպեան տառերով,  
Եկ խօսենք մեր անուշ  
Բառերով:

Մեր հանդէպ ապագայ լուսեղէն,  
Թող հնչի մեր լեզուն վեհօրէն,  
Թող այրւի մեր հոգին  
Այդ հրէն:

Մեզ ցրեց մի բազուկ անօրէն,  
Թէ կուգես սերունդներ մեզ ներէն,  
Մենք հայ ենք, եկ խօսենք  
Յայերէն:

Այս օտար աշխարհի ցրտերում  
Եկ սիրենք մեր լեզուն ջերմօրէն,  
Եկ վառենք ու վառուենք  
Յայերէն:

## Հայոց լեզու

-  
ՎԱՐԱՆԴ

Ես պաշտում եմ քեզ, իմ Հայոց լեզու,  
Դու վանք, դու կրակ, դու զեփիւռ նազուն.  
Թռիչք ես առել արծուով դու Սասմայ  
Ու վերածւել ես փոթորկի ցասման.  
Ես պաշտում եմ քեզ, լեզու իմ անգին,  
Դու արևոտ երկիր, դու խաղաղ երկինք.  
Ասես ծնել ենք քեզ վին ու փանդիռ,  
Սակայն օրօրել շանթերը հրթիռ:  
Դու ես Մաշտոցին տւել շունչ մի լուրթ  
Ու Նարեկացուն՝ մրրկում կապոյտ.  
Դու՝ Խորենացու հրեղէն մատեան,  
Դու՝ ալեծուփ գետ «Հայոց պատմութեան»:  
Քեզնով են հեգել Քուչակ ու Նաղաշ,  
Ու անանուն մեր քերթողներն հրաշք.  
Քեզնով են երգել երգիչներն Գողթան  
Ու՝ Արեւելքի երգի Մեծ Արքան:  
Քեզնով է այրւել խօլ Սիամանթօս  
Ու Վարուժանի «երգերը»՝ կերոն.  
Այդ դո՛ւ ես ծնել թումանեանին մեծ,  
Դարիս պօետին անւանել՝ Չարե՛նց:  
Դու ես կախարդել Տերեանին թախծոտ  
Ինքդ մնացել մաքուր առաւօտ.  
Դու ես ներշնչել Սեւակ ու Սահեան,  
Ինքդ մնացել կայտառ անսահման...

Դու ես թնդացել մարտերում հին-նոր,  
Մօր պէս գուրգուրել որբերիդ մոլոր,  
Որ աշխարհում այս այդ ուր էլ գնան,  
Քեզանով ապրեն, քեզ համար ման,  
Մի «Այբ»-դ անգամ չտան ուրիշի,  
Որ «Արդարութիւնն» ի սպառ չկորչի,  
Ու դեռ ի՛նչ երգեր պիտի գրառես,  
Ու դեռ ի՛նչ սրտեր պիտի գրաւես,  
Դեռ պիտի փայլես բեմերում բազում.  
Ես պաշտում եմ քեզ, իմ Հայոց լեզու...

## ԲԱՌԵՐ

Վին ու փանդիռ  
Լուրթ  
Քերթող

լարաւոր նւագարաններ  
բաց- կապոյտ, երկնագոյն, այստեղ՝ պայծառ  
բանաստեղծ



Կերոն

մեծ մում, ջահ

## Մայրենի լեզուն

ԱԼՄԻՆ

Դու իմ մայրենի լեզուն ես վսեմ,  
Քո սուրբ բառերով ուզում եմ խօսել:

Ուզում եմ ոգել տառերդ մեկ-մեկ  
Գրել սովորել, գրել նոր մի երգ:

Դու հասել ես ինձ մեր հին դարերից,  
Իմ Հայաստանի հզոր քարերից:

Մայրիկիս նման մայրենի լեզու,  
Քո ծով արեւից՝ կաթիլ եմ ուզո՞ւմ:

Դարձիր անբաժան ընկերը կեանքիս,  
Դու իմ անգին սեր, հայկական հոգի՛ս:

Դու լոյսի աղբիւր, լուսեղէն կարօտ,  
Այս առաւօտի նման արեւո՞ւտ:

Հնչի՛ր յաւիտեան, ապրիր հոգուս մէջ,  
Իմ սրտի տենչանք՝ մայրենի իմ պե՛րճ:

Որ ես հա՛յ մնամ աշխարհում այս մեծ՝  
Դու վառւի՛ր յաւերժ իմ հայ Ռգու մե՛ջ...:

### ԲԱՌԵՐ

ոգել	արտասանել, ասել
տենչանք	ցանկութիւն
պերճ	շքեղ, փառաւոր

Դու մեծ ջահակիր  
(Ձօն Մեսրոպ Մաշտոցին)

ՏԻԳՐԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

Ո՛չ մի արհաւիրք  
Չի՛ կարող փշոել  
Մեր ողնաշարը,  
Որ Դու ես կռել:

Ո՛չ մի դաժան հողմ  
Չի՛ կարող պոկել  
Կաղնին դարաւոր,  
Որ Դու ես տնկել:

Դու Մեծ Ջահակիր,  
Մենք՝ ջահոյ վառող:  
Դու Մեծ Վարդապետ,  
Մենք՝ բիւր աշակերտ,  
Դու Մեծ Չօրավար,  
Մենք՝ բազում բանակ:

Դու հսկայ փրկիչ՝  
Մեր ահեղ երթի,  
Դու արթուն պահակ՝  
Մեր փոքրիկ բերդի:  
Ու մենք մարտիրոս  
-

Մի ողջ ժողովուրդ,  
Կուրծքներս վահան  
Յոգով Քեզ պաշտպան,  
Պահել ենք փառքը  
Քո հնադարեան,  
Ու դե՛ռ կը պահենք  
Այսօր եւ վաղը,  
Մինչեւ յաւիտեան...

### **ԲԱՌԵՐ**

ջահակիր	ձեռքին ջահ ունեցող մարդ, առաջնորդ
ծօս	որեւէ մէկին նւիրած գրւածք
արհաւիրք	աղետ, մեծ դժբախտութիւն
կռել	այստեղ՝ կերտել, կառուցել
մարտիրոս	նահատակ

### **ՅՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ**

\*\*\*

Թեպետեւ բախտը մեզ շատ հարւածեց  
Երկար դարերով, ահեղ հարւածով,  
Թեպետեւ եապէս ցուեց, տարածեց,  
Ձրգեց հողեհող, փրռեց ծովէծով,

Վկայ է սակայն բովանդակ երկիր,  
Որ մենք կարեպէր ապրում ենք կրկին,  
Եւ ուր հասնում է հայի գիրքն ու գիր -  
Կենդանի է դեռ հայութեան ոգին:

### **ԲԱՌ**

Կարեպէր	սաստիկ վիրաւորւած
---------	-------------------

## Տղաս, լեզուն հայկական

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Տղա՛ս, լեզուն Յայկական մեր ամրոցն է անառիկ,  
Չոր քար առ քար կերտեցին մեր պապերը

դիւցազուն,

Կը փշուրին անոր դէմ ամէն քամի, փոթորիկ,  
Կըլլան ժայռերն անգամ կաւ իր ճակատին դէմ  
ցուն:

Ամէն մէկ բառ յղկելով ու փայլ տալով զտեցին,  
Յայոց լեզուն ոսկեշող, մեր պապերը վեհապանծ,  
Անկէ գրահ շինելով զայն հագցուցին մեր ազգին,  
Որ պահպանէ ան ինքզինք ալիքներու դէմ անսանձ:

-

Ու կոկելով, կոփելով լեզուն Յայոց քաղցրալար  
Մեր հայերը հանճարեղ զայն դարձուցին երգեհոն,  
Երգի, խունկի ծաղկաստան՝ յաւերժական ու դալար,  
Կտակեցին զայն մեզի իբրեւ խոստում, փառատօն:

Տղա՛ս, լեզուն Յայկական ժառանգութիւն է շքեղ,  
Յարս է աղւոր ու ժպիտ, գեղեցկութիւն է անմեռ,  
Չոր իր փառքին հասցուցին գուսանները ամէն տեղ,  
Յայաստանէն մինչեւ հոս, հազարանուն այլ ափեր:

Ապրող, աճող մեր ազգին հզօրագօր ձայնն է ան,  
Յոգիներու կամուրջն է, սիրոյ շղթան ոսկեկուռ,  
Յայրենիքէն երկարող, տղա՛ս, լեզուն հայկական  
Մայրական ձեռք ու գգուանք, նկիրում է եւ համբոյր:

Գալիքները կը մոռնան գուցէ երգերն այս բոլոր,  
Խօսել լեզուով պապերուդ, հօրդ կտակն է քեզ, որդի՛,  
Ու փոխանցէ զայն դուն ալ գաւակներուդ գերթ օրօր,  
Իբրեւ զըրահ ու ամրոց, հպարտութեան ակ յուռթի:

### ԲԱՌԵՐ

յղկել - կոկել, հարթել  
վեհապանծ - փառաւոր  
անկէ - նրանից  
երգեհոն - նւագարան, օրգ  
աղւոր - գեղեցիկ  
գերթ - ինչպէս, նման  
յուռթի - պտղաբեր

## Իմ անգին լեզու

Ինչպէ՛ս չսիրեմ ես քեզ, իմ անգին՝ լեզու,

ԴԵՒ

Երբ ինձ հետ ես թե՛ արթուն եւ թե՛ երագում:

Ինչպէ՛ս կարող եմ քո դէմ յոյզերս գապել,  
Երբ ապրում ես դու իմ մէջ թանկ երագիս պէս:

Ինչպէ՛ս շունչդ իմ հոգուն բերկրանք չբերի,  
Երբ ծնւած ես դու ինձ հետ, լեզո՛ւ մտերիմ:

Ինչպէ՛ս սիրտս չգերեն բառերդ ոսկի,  
Յնչիւնները լուսալար քո թովիչ խօսքի:

Ինչպէ՛ս վճիտ աղբիւրիդ ակը չբանամ,  
Որ քո բիրեղ հոսանքից խմեմ, յագենամ:

Ինչպէ՛ս, ինչպէ՛ս չգովեմ քեզ իմ ջինջ երգերում,  
Երբ քո հրաշք խօսքերով երգերս եմ երգում:

-

## **ԲԱՌԵՐ**

բերկրանք - ուրախութիւն

թովիչ - գրաւիչ

յագենալ - կշտանալ

## **Յայոց լեզու**

ԵՐԻԱՆԴ ԲԱՁԵՆ

Իմ հայրենի արտերի պէս,  
Յայոց լեզուն, հասկ է հասուն.  
Յազարակունք աղբիւրի պէս,  
Անմահական ջուր է հոսուն:

Երգ է խօսուն, ջուր է հոսուն,  
Ոսկեդարեան Յայոց լեզուն.  
Անմահ մնայ ջինջ ու խօսուն,  
Մեր մեծասքանչ հայոց լեզուն:

Յայոց լեզուն պայքարի մէջ,  
Միշտ յաղթական ու քաջագուն.  
Դարերի հետ ճամբայ ելած,  
Յայոց լեզուն, երգ է խօսուն:

Պաշտպանում եմ ես իմ մայրենի,  
Յրաշափառ հայոց լեզուն.  
Սէր ու սրտեր միաձուլող,  
Լուսապայծառ հայոց լեզուն:

Ողջ աշխարհում վեհ ու վսեմ,  
Նկիրական հայոց լեզուն.

Դարերի հետ թող միշտ յաւերժ,  
Անմահ մնայ հայոց լեզուն:

## Յայոց գրերիւ

ՄԿՐՏԻՉ ԿՈՐԻԷՆ

Դուք անմար կանթեղ մեր հայ դպրութեան,  
Նախահայրերիս մրմունջ, ողբ ու երգ,  
Դուք՝ անկորած հիմք հինաւուրց մեր տան,  
Դուք՝ մեզ անցեալին կամրջող սուրբ ձեռք:

Յայրենի գրեր դուք մեր երկնատուր,  
Դուք ամենաթանկ հրեղէն պարգեւ,  
Մեր երազանքի անմահ ակնադբիւր,  
Դուք մեր խոյանքի անխոցելի թել:

Թողած հայրենիքն հրդեհի բոցում,  
Նզոված կարգերն ու բարքերը չար,  
Յայ մայրն է սնել ձեզ իր ջերմ ծոցում,  
Մանկան հետ տարել՝ աշխարհից աշխարհ:

-

Եղեռն էք տեսել դուք քանի՛-քանի՛,  
Անցել բոցերի ու արեան ծովից,  
Բայց յաւերժ անմահ, յաւերժ կենդանի,  
Յայոց երկրի պէս յառնել էք նորից,

Դուք իմաստութեան ստոյգ ուղեգիծ,  
Օժտւած տքնութեան, հանճարի փայլով,  
Դուք սերունդների անմահ ուղեկից,  
Գալիքը տանող լուսեղէն քայլով:

Ու քանի պայծառ մնաք մեր հոգում,  
Դուք մեսրոպատառ քերթութիւն ու գիր,  
Մեր սուրբ անւանը չի լինի անկում,  
Յաւերժ կունենանք Յայրենի երկիր:

### ԲԱՌԵՐ

դպրութիւն - գիր ու գրականութիւն  
կամրջել - կամուրջի ձեւով հին ու նորը իրար միացնել  
խոյանք - թռիչք  
բարքեր - բարի սովորութիւններ  
յառնել - ոտքի կանգնել, վերակենդանանլ  
քերթութիւն - բանաստեղծութիւն

## Յայոց տառեր, հայ այբուբեն

ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հայոց տառեր, հայ այբուբեն,  
Դուք լոյս էք տաք  
Ու մօր գորով,  
Թռիչքների համար հատու,  
Պարգեւների համար բոլոր,  
Ճամփայ յաւերժ.  
Ոսխի դէմ ոխ ու վրեժ.  
Բարիներին սուրբ յենարան  
Մեր սիրագիծ հայոց տառեր,  
Մեր մայրախօս այբբենարան:  
Դուք միշտ մեզ հետ  
Մեր շուրթերին  
Ու մեր հոգում  
Անընկրկում ու անբաժան,  
Դուք յարատեւ ու յարաժամ՝  
Բոլոր ցուած հոգիների  
Համահաւաք,  
Ազգ ու ցեղի սուրբ ապաւեն,  
Երկիր պահող մայր ու զաւակ:

2

Դուք մեր հաւատ,  
Դուք մեր զաւակ,  
Մեր սրբածին,  
-

Մեր սրբավայր  
Մեր քոյր ու մայր  
Հայոց տառեր  
Դուք մեր բարի  
Ճանապարհի  
Սիրաշաղախ  
Հրաշախաղ  
Մեր ոգեղէն կռիւ խաղաղ  
Մեր հանճարի իմաստութեամբ  
Էջեր դիզւած,  
Ամեն տողում սիրտ ու հոգի  
Իրար առած ու հրկիզւած  
Մեր ծաղկաներկ լոյս գծերով  
Գործող բանակ:  
Ամենասուրբ մեր հատուցում  
Ամենաթանկ մեր յաղթանակ:

## **ԲԱՌԵՐ**

գորով - սեր, գուր  
հատու - ազդու, ուժեղ  
անընկրկուն - չնահանջող  
հատուցում - փոխարինութիւն

Հայոց լեզու

ՎԱՅԱԳՆ ԿԱՐԵՆՑ

Մայրական անուշ կաթի հետ մաքուր  
Ես ճաշակել եմ հնչիւնների անգին,  
Երբ օրօրել է ինձ մայրս անքուն,  
Որպէս նոր ծնւած մի հայ գաւազի:

Եւ դարձել ես դու իմ սրտի լեզուն,  
Յեռն՛ւ դարերի խորքերից եկած,  
Իմ արեւը տաք, իմ օրը լազուր,  
Իմ լուսէ կեանքի գարունը ծաղկած:

Ես որքան ունեմ յոյզեր կարկաչուն,  
Կը դնեմ անմահ քո բառերի մէջ,  
Յայերէն իմ երգ, հայերէն հնչիւն,  
Որ դու դողանջես իմ սիրով անշէջ:

Ես քո հին լեզւի մի նոր բանաստեղծ,  
Ես իմ երգերում տենչում եմ այնքան,  
Որ դու մարդու հետ միշտ խօսես անկեղծ,  
Այնպէս մտերի՛մ, այնպէս հայկական:

Ուզում եմ քեզնով աշխարհին բանալ  
Տենչերը բոլոր իմ այս օրերի,  
Որ իմ հայերէն յոյզերը զուլալ  
Դու կարկաչելով տանես դարերին:

-

## **ԲԱՌԵՐ**

լազուր - բաց կապոյտ գոյն  
տենչ - մեծ ցանկութիւն

## **Մեր լեզուն**

**ՅԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ**

Ամէն ժողովուրդ ունի իր լեզուն,  
Ամէն մի թռչուն իր ձայնով խօսում,  
Իր սրտի երգն է տալիս աշխարհին,  
Սիրում, փայփայում իր ծաղիկներին,  
Իր խօսքն ասում այս արեւի տակ,  
Իր լեզւով գովում աստղերը սուտակ,  
Դաշտերը կապոյտ, լեռներ՝ մշուշում,  
Ծնողին, որդուն, սիրածին յիշում,  
Վա՛ռ պահում օջախն իր պապենական,  
Իր լեզւով է նա հասկանում անգամ  
Ուրիշի լեզուն եւ խօսքը բարի,  
Ու հպարտ նայում մարդուն, աշխարհին:  
Դո՛ւ էլ ինձ համար թա՛նկ ես, սրտի՛ս մէջ,  
Դո՛ւ ես իմ հոգու կարկը անշէջ,  
Յայոց հի՛ն լեզու՝ քաղցր ու սրբատաշ,

Քեզնով են երգել Ֆրիկ ու Նադաշ,  
Դո՛ւ ես յաղթ պահել հողը հայրենի,  
Դարձել կուռ վահան, սուրը Վարդանի,  
Ընկած զինուորի վերքերը բուժել,  
Եւ թշնամանական զօրքի դեմ խուժել:

Քեզնով են հիմա նոր Երեւանում  
Այսքան սիւնազարդ շէնքեր բարձրանում,  
Մերեր քաղցրանում, բացւում կակաչներ,  
Քո բոյրով լցնում օջախները մեր,  
Մեր սեղանները, մեր հացն ու գինին,  
Որ փառքը քո մեծ յաւիտեա՛ն լինի:  
Որ զաւակներդ՝ քեզնով զօրացած,  
Յաւատով քո խոր, քո սիրով լցւած,  
Կարդան քո գիրը, քեզ լա՛ւ ճանաչեն,  
Եւ հայ լինելուց երբե՛ք չամաչեն:

## ԲԱՌԵՐ

սուտակ - թանկագին եւ ամուր քար  
յաղթ - զօրաւոր, հզօր

## Միակ մայրենին

ՄԻՔԱՅԵԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Լեզուներ գիտես,  
գիտես, իմացիր.  
Եւ ո՞վ չի ուզում,  
Բայց հասկանո՞ւմ ես ի՞նչ է ինձ յուզում.  
- Աւա՛ղ, համր ես դու,  
-  
Քանզի չգիտես միակ մայրենին՝  
Քո հայոց լեզուն:

Գուցէ կարծում ես այդ միեւնո՞յն է,  
Բայց ինձ թւում է  
Արար աշխարհը  
Քեզ համար միայն թարգմանութիւն է...

## Յայոց լեզու

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Արարատով բացեց մայրն իմ  
Այբբենարանն իմ առաջին,  
Աղբիւրների անուններով  
Գտայ բերդերը մեր վերջին,  
Մեր լեռների անուններով  
Ճանաչեցի աշխարհը մեր,  
Մեր բարձրաբերձ պարիսպները  
Ճախրանք առան երկինքն ի վեր:



Իսկ արտոյտներն արտերում  
Երկինքի տակ հայրենական,  
Թուխ թելերը տւած հովին  
Յօրինում են դեռ շարական,  
Ու փաթաթւում են ամպերին  
Մասրենիները երազուն,  
Խնկարկւում է այդ բոյրերից  
Մեր ծաղկաբոյր հայոց լեզուն:

Եւ երբ մի օր ճամբաներում  
Մի թել գտայ ես խաչքարի,  
Վրան լոյսերը երերուն,  
Վրան ձեռքը մեր հանճարի,  
Աստղամոմերը երկնային  
Քանդակեցին մի հայ Մաշտոց,  
Տեսայ հրաշքն աստւածային,  
Տեսայ գրերը մեր հայոց:

Ապա տողն իմ սրբանւեր,  
Որ մագաղաթ էր մի ճերմակ,  
Որին միշտ լոյս էին արարել  
Գրիչները մեր արեգակ:  
Մաքառումով նրանց արդար,  
Տքնութիւնով անկարելի,  
Հրաշապատում մի Ախթամար,  
Կանթեղներով անմարելի:

Նարեկացու աստւածաշունչ  
Մատեններով մեծաքանքար  
Հոգին մեր թել ու լոյս առաւ,  
Կանգուն մնաց նա դարեդար,

-

Այբուբենի առաջին տառ,  
Կազմով հպարտ հայոց լեռներ  
Եւ աղբիւրներ աստղաբարբառ,  
Հայրենախօս մեր տաճարներ:

Նախաճիւղներից մշտակործան,  
Աւերներից յար ու բազում,  
Եւ մահերից միահեծան  
Դու ահ չունես ու փլուզում:  
Պիտի ապրես Մասիսի պէս,  
Քանի նա կայ երկնքի տակ,  
Դու թելաւոր մեր Հռիփսիմէ՝  
Մեծախորհուրդ ու երազուն  
գոյատեւման դու հրովարտակ,  
Բարձրաքանդակ հայոց լեզու:

**ԲԱՌԵՐ**

բարձրաբերձ - շատ բարձր  
ճախրանք առնել - թելեր առնել ու վեր բարձրանալ  
մասրենի - վարդի թուփ  
երերուն- դողդոջ  
արարել - ստեղծել, ստեղծագործել  
մեծաքանքար - մեծատաղանդ  
Նախճիր - արիւնահեղութիւն  
հրովարտակ - Նամակ, հրամանագիր

## Հայոց լեզուն

ՆԱԼՍԵՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Արագածի շաղոտ լանջով,  
Հրազդանի շող ու շնչով,  
Մեր երգերի ոսկե փնջով  
Ճանաչում է հայոց լեզուն:

Հովի շուրթին գլարթ ու զով,  
Բարդիների կանաչ Նազով  
Եւ խաղողի ծաղկած վազով  
Սօսափում է հայոց լեզուն:

Կռունկների թւապարով,  
Կռունկաւար իր Նոր բառով,  
Նոր շէնքերի սիւնաշարով  
Խոյանում է հայոց լեզուն:

Վիշտ ու մորմոք, ցաւ ու մրմունջ,  
Ոսոխներին թունոտ ու փուչ՝  
Էպոսներում իր Նորաշունջ  
Մոռանում է հայոց լեզուն:

Աբովեանից Նոր հելք առած,  
Թումանեանով՝ թւատարած,  
-  
Տերեանի հետ գնում առաջ,  
Ծովանում է հայոց լեզուն:

Ու դառնալով աստղի անուն  
Աստղաճանաչ Բիւրականում,  
Կարմիր, կանաչ Երեւանում  
Չօրանում է հայոց լեզուն:

Մաքրում է երգն իր զանգերի  
Փոշուց օտար աղմուկների,  
Շուշան շուրթին մանուկների  
Նորանում է հայոց լեզուն:

Ղօղանջում է քաղցրիկ ու ջերմ,  
Բայց Մասիսի ձիւնի առջեւ,

Երակներում արեան կանչեր՝  
Կարկամում է հայոց լեզուն:

Բարութիւն է շունչը նրա,  
Բայց յուշերում իր հնօրեայ  
Իմ պապերի բախտի վրայ  
Բարկանում է հայոց լեզուն:

Դա երե՞կ էր, թե՞ շատ վաղուց,  
Որ սարսուռը դարձաւ սառոյց,  
Որդոց համար մորմոքալուց  
Դալկանում է հայոց լեզուն:

Բայց թելերն է նորից բացում,  
Ինչպէս դաւիթն օրօրոցում,  
Ծով ազգերի վարդանոցում  
Միշտ ծաղկում է հայոց լեզուն:

Մեր մեծերի հանճարակերտ  
Իմաստութեամբ օժիւծ յաւետ  
Եկող ամէն սերնդի հետ  
Մանկանում է հայոց լեզուն:

Ժամանակի մեծ յորձանքում,  
Գալիք տանող երագանքում,  
Լեզուների անլան ցանկում  
Չանգ անուն է հայոց լեզուն:

Ղօղանջում է արեւի տակ  
Խորենացուց մինչեւ Սեւակ,  
Մեր ազգախօս, ազգահաւաք  
Ազգանունն է հայոց լեզուն:

## **ԲԱՌԵՐ**

դպոս - վեպ, դիւցազներգութիւն  
հեքի առնել - շունչ առնել

-

մորմոք - կսկիծ, մրմուռ  
դալկանալ - դեղնել, գունատուել  
յորձանք - հեղեղ, բարձր ու մեծ ալիք

## **Մայրենի լեզու**

ՍՈՒՐԵՆ ՍՈՒՐԱԴԵԱՆ

Իմ պատուհանից ցնծութիւնն ասես  
Գարնան քնքշանքով մեղմ թափանցեց ներս.  
Առաջին անգամ մանկիկն իմ ինդուն

Դպրոցից եկել, ա տառն է սերտում:  
Ա տառն է գրում մանրիկ մատներով,  
Տառեր է շարում խնամքով, սիրով:  
Մաշտոցն է այդպես մանկան պես մի օր  
Յրճել իր գիւտով՝ հրա՛շք, լուսաւո՛ր:  
Քանի՛ սերունդներ ա տառով զնգուն  
Չգացել են այս հրճանքը մաքուր:  
Այն վեհ է՝ ինչպես ժպիտը մանկան,  
Սօր գգւանքի պես միշտ նւիրական,  
Նման ծլվլուն ծիծառի կանչին,  
Յայրենի հողի կենարար շնչին:  
Ամեն օջախի կրակն է անշէջ,  
Ամէ՛ն յարկի տակ, ամէ՛ն սրտի մէջ,  
Մեր ժողովրդի ոգին հրկիզուն  
Եւ երկու բառով՝ մայրենի լեզու:

### **ԲԱՌԵՐ**

ծիծառ- ծիծեռնակ  
կենարար- կեանք ստղծող  
հրկիզուն- այրող

## **Յայոց լեզու**

ՀԱՍԼԵՏ ԿԱՐՃԻԿԵԱՆ

Յանապագօրեայ հաց դու մեր միակ՝  
Արարման օրից Արարատ սարի,  
Մաքառումների դրօշ հուրհրան՝  
Բարձրացած պայծառ բարձունքը դարիս:

Քո ամեն տառը՝ ժայռեղէն սլա՛ցք,  
սլացող հիա՛ցք՝ քո ամեն բա՛ռը,-  
Եւ դանդաղաշարժ, եւ արագընթաց,  
Մեր սուրբ սրբոցից ամենավառը:

Դու ես մեզ փրկել ժանգից օտարի՝  
Մութ բաւիղներում դաժան պատմութեան,  
Թէ ենթարկւել ես անգամ վթարի՝

-

Դարձել ես մարտիկ սրամարտութեան:

Քեզ համար ենք մենք միշտ արիւն թափել՝  
Լքելով անգամ հող ու հայրենիք,  
Մեզնից առաւել՝ դո՛ւ ես տառապել՝  
Թեւաւորելով օրերը գալիք:

Դու մեր արեան մէջ- զրնգուն տեսիլք,  
Դու մեր շուրթերին- երդում առ Աստուած,  
Դու միա՛կ բարձունք ոգեղէն լոյսի՝

Նոյնիսկ օրերում քո լուռ ու սաստաճ:

Դու վեհ գալիքի մշտահուր կրակ՝  
Սեգ պատանդանին ճառագող դարի...  
... Հանապազօրեայ հա՛ց դու մեր միակ՝  
Արարման օրից Արարատ սարի:

## ԲԱՌԵՐ

հանապազօրեայ- ամեն օրւայ  
բաւիղ- բարդ եւ խառնաշփոթ դրութիւն  
սաստաճ- զսպաճ  
պատանդան- յենարան

## Մայրենի լեզու

ՍՈՂՈՄՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ

Իմ լուսաբարբառ մայրենի լեզու՝  
Թրի պէս կտրուկ, հրի պէս կիզուն:  
Դու մշտակարկաչ հայրենի աղբիւր,  
Դու անո՛ւշ, անո՛շ մայրական համբոյր.  
Դու մեր սրտաբուխ, մաքուր խինդ ու լաց,  
Մեր օջախի ծուխ, մեր սուրբ աղ ու հաց.  
Մեր անմահութեան լուսեղէն ակունք,  
Մեր արծիւ հոգու, աննւաճ բարձունք:  
Աշխարհում որտեղ պանդուխտ մի հայ կայ,  
Դու մայր Հայաստան նրա հոգու մէջ.  
Դու նրա սրտի մատեանում անմահ  
Հայոց պատմութիւն գրւած էջ առ էջ.  
Դու նրա տոչոր շուրթերը այրող  
Կրակ անտունի, կարօտի կարկաչ.  
Դէպի սրբազան մայր հողը ճախրող  
Անքուն ծիծեռնակ դու հայրենականչ:  
Ծլատեցին մեզ ոսոխները բիրտ  
Ու երա՛մ-երա՛մ չլեցինք թափառ,  
Բայց հնչեցիր ու շաչեցիր դու միշտ  
Անգամ հեռաւոր հողերում օտար:  
Եւ դու կըշաչես, ինչպէս հայր անտառ,  
Քեզ յաւերժութեան արեւն է շողում.  
Ամեն մի բառիդ մի կաղնի դալար՝  
Խոր արմատ գցած հայրենի հողում:

-

Իմ լուսաբարբառ՝, մայրենի լեզու՝  
Թրի պէս կտրուկ, հրի պէս կիզուն.  
Մեր հոգու պատկեր՝ դու վճիտ Սեւան,  
Մեր արեւագոյն, կանգուն Երեւան.  
Մեր խաղողի վա՛գ, մասունք-մագաղաթ,  
Մեր սուրբ գինու թաս ու մայրական կաթ.  
Մեր խինդ ու արցունք, քրտինք անարատ,

Մեր հոգու բարձունք՝ անմահ Արարատ:

**ԲԱՌԵՐ**

տոչոր- այրող  
անտունի- պանդխտական երգ, այստեղ՝ պանուխտ  
ծւատել- պատառ պատառ անել

**Հայոց լեզուն**

ԳԵՈՐԳ ԷՐՈՒՔԵԱՆ

Պիտի մարեր օջախն հայոց՝ դարարի մէջ  
Դուրս չէր գալու երդիկներից ծուխը դէպի երկինք  
Կորչելու էր պատմութիւնից մի դարաւոր սեգ  
Թէ չծնւեր երկունքներով մեսրոպատառ հայոց լեզուն:  
Կայծակներ են փայլել, շաչել ժողովրդիս գլխի վրայ,  
Փոթորիկներ պայթել անթիւ, արշաւանքներ յորդել  
Ու դարերի մութ ճամբքում կըմոլորուէր ուղին նրա՝  
Թէ չվառւէր ինչպէս փարոս մեսրոպատառ  
Ու ցրւեցին աշխարհով մէկ, եգերքներից անցան եգերք,  
Որբերի պէս խաբտահալած, վշտամորմոք ու  
Բայց վայրերում օտար ու խորթ որպէս կեանքի  
Շուրթերին էր թառել նրանց մեսրոպատառ հայոց  
Իմ հայրենի երկրի չքնաղ ափերից զով ու անվրդով,  
Աչքը որդու ճամբին յառած մօր պէս քնքուշ ու  
Տուն է կանչում պանդուխտ, մոլոր զաւակներին խոր  
Յոյսի, լոյսի նման զօրեղ մեսրոպատառ  
Օ՛, դարերը այիւնաներկ գնացել են, երազ են սին,  
Իսկ հայրենի հողում հիմա կեանք է ծաղկում  
Արշաւում է վերածնւած ժողովրդիս հետ միասին  
Դէպի դարերն իմ արելշող մեսրոպատառ հայոց

սեւախորհուրդ,  
լազուր,  
ժողովուրդ,  
բազում,  
հայոց լեզուն:  
անխնդուն,  
անմահ մի երգ  
լեզուն:  
սիրասուն,  
կարօտով,  
հայոց լեզուն:  
բազմաբեղուն,  
-  
լեզուն:

**Մեր դպրոցը**

Մա՛րդ ներ կրևար կազմել դպրոց  
Մաւելի՛ շէն ու շքալի  
քան ան եւ ես՝  
Յայր ու որդի:

Ես՝ ուսուցիչ, աւանդեցի.  
Իբր աշակերտ՝ ան առաւ մի՛տք,  
Սորվեցաւ գո՛ց  
Իր հայութեան վեպն ոսկեղնիկ:

Մեր ծրագիրը դպրոցի  
իրեն բացի:  
Ու պարզ՝ ըսի:  
Առաջին դաս՝  
    -Յա՛յ ես, տղա՛ս:  
Դասը երկրորդ, ասոր նման.  
    -Դուն հայրենի՛ք  
Մունիս, անունը՝ Յայաստան:  
Մեծ մասը քար: Վրան սակայն  
Խնջոյքի պէս սեղա՛ն մը յորդ  
    Կանաչութեան:  
Իսկ երրորդ դասը մնաւանդ՝  
    -Մեսրոպաւանդ  
Լեզւիդ եղիր հաւատարի՛մ  
Մինչեւ ի մահ:

Յիմա, գնա՛...

**ԲԱՌԵՐ**

շքալի- շատ շքեղ  
աւանդել- դասաւանդել  
յորդ- առատ

**Յայերէն գիրք**  
(հատուած)

Բայց նոյն ատեն,  
Ե՛ս ալ Մաշտոց նախանձայոյզ,  
Տե՛ս, ձեռքերուդ մէջ կը դնեմ  
Տուփի նման ծրարը այս:  
Աս՝ հայերէն գի՛րք է, տղա՛ս.  
Յայու լեզուով, քո՛ւ լեզուով գիրք,

Քեզի՛ համար,

-  
Թեւ,- գիտե՛մ,-  
Դուն ի՛նչ գիտնաս

Չանագանել իրարմէ գիրք

Ու խաղալիք:

Երկուքն է մէկ քեզի համար,  
Նոյնն է ինչպէս նուշ ու կաղին՝

Քիմքիդ անվարժ:

Ի՞նչպէս գիտնաս,  
Ան ինչո՛ւ է ինձ թանկագին՝  
Հողին հանգոյն հայրենական,  
Ինձ սիրելի՛ հոր մը նման  
Եւ քաղցրանոյշ՝ մօր կաթին պէս:  
Օ՛, թէ գիտնաս  
Ձեռքերուդ մէջ ի՞նչ ուժանակ,

ի՞նչ ուժ ունիս՝

Նւաճելու աշխարհ մը ողջ...  
Ա՛ս, հայերէն գի՛րք է, տղա՛ս:

### ԲԱՌԵՐ

Նախանձայոյզ- նախանձով յուզւած, նախանձախնդիր  
քիմք- այստեղ՝ հաճոյք, ախորժակ  
հանգոյն- նման  
ուժանակ- դիւամիտ, ուժեղ պայթուցիկ սիւթ

### ԼԵԳՈՒ

ԺԱԳ Ս.ՅԱԿՈԲԵԱՆ

Իսկ ծրարիս բաժինն երրորդ՝  
Ահա ափիդ մէջ կը դնեմ  
Իբր հրիտա՛կ մեր պապերէն,  
Նշխա՛ր իբրեւ  
Աճիւններէն անոնց արեւ:  
դրօշակ մէ՛ ան:  
Չայն ունեցիր ձեռքիդ մէջ ձախ՝  
Վահանի պէս կուռ ու խիզախ:  
Անո՛վ պահւի, պահես պիտի  
Միջնաբերդը հայ ինքնութեան.  
-Մեսրոպաշունչ բարբառն է ան:

Հայ լեգուն հողն է Հայուն՝  
Հայրենիքի մը հանգոյն...

Անո՛վ կանաչ ու ծաղկուն  
Պիտի մնայ հայ Ածուն

Եւ Հայ Հոգին լոկ անո՛վ  
Կրնայ տելել տրոփուն՝

Տարաշխարհի տատասկոտ  
Ու տապահար ժայռերուն...

Տարաշխարհի լպրծուն  
Եւ կասկածուն ափերուն,



-  
 Հայ Լեզուն հո՛ղն Է Հայուն՝  
 Ամո՛ւր Է ան ինչպէս ժայռ  
 Տարաշխարհի անհաստատ  
 Այս հողը ի՛նչ կը բխէ  
 Կը հոգայ խո՛ւնկ ու կնդրո՛ւկ  
 Եւ հայ Տունի պարտեզին  
 Տարաշխարհի անարեւ  
 Տարաշխարհի մութերուն՝  
 Կանթեղը հայ դպրութեան,  
 Եւ սիւնը հայ գմբէթին  
 Դարաւոր հայ Հաւատքին  
 Հայրենիքի մը հանգոյն:  
 Եւ դաշտի պէս ալ յուռթի՛,  
 Ու անապատ ափերուն:  
 հայ Դպրոցի լամբարին,  
 Հայ Խորանի բուրվառին  
 Կու տայ մեխակ ու հայկակ,  
 Ու անտերեւ տափերուն:  
 Անո՛վ պայծառ կը մնայ  
 Հայ Երգին լարը՝ հնչո՛ւն,  
 Անո՛վ կանգուն Է միայն՝  
 Իբրեւ կոթող անսասան:

**ԲԱՌԵՐ**

հրիտակ- կտակով ժառանգութիւն թողած  
 կուռ- ամուր  
 խիզախ- համարձակ, քաջ  
 ածու- այստեղ փոքր երկիր, փոքր ազգ  
 տարաշխարհ- օտար երկիր  
 տատասկ- փշոտ բոյս  
 տապ- տաքութիւն, ջերմ  
 հանգոյն- նման  
 յուռթի- պտղաբեր  
 լամբար- ճրագ, լամպ  
 հայկակ- հայրորդի, հայ  
 տափ- տափարակ գետին, դաշտ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

- 1- Հայոց լեզու
- 2- Այբուբեն հայոց.....Օննիկ Փանիկեան
- 3- Մեր լեզուն .....Համօ Սահեան
- 4- Իմ հայ լեզու .....Սիլւա Կապուտիկեան
- 5- Խօսք իմ որդուն .....Սիլւա Կապուտիկեան
- 6- Տառերն հայոց .....Չորայ Մարկոսեան
- 7- Լաւգոյն նւեր .....Վաղարշակ Նորենց
- 8- Մեր այբուբենը .....Գեորգ Էմին

- 9- Հայոց լեզու .....Նայիրի Չարեան  
 10-Հայերեն .....Նայիրի Չարեան  
 11- Մայրենի լեզու .....Ստեփանոս Նազարեանց  
 -  
 12- Բարբառ մայրենի .....Սարմեն  
 13- Օջականում .....Սողոմոն Տարոնցի  
 14- Տաղ հայերեն լեզվին ...Վահան Թեքեան  
 15- Հայոց լեզուն .....Յովհաննես Շիրազ  
 16- Քառեակներ հայոց լեզւապատումի....Յովհաննես Շիրազ  
 47- Մեր լեզուն .....Եղիշե Չարենց  
 18- Եւ այր մի մաշտոց անուն .....Պարոյր Սեւակ  
 19- Մայրենի լեզու .....Պարոյր Սեւակ  
 20- Հայ լեզուն տունն է հայուն ....Սուշեղ Իշխան  
 21- Մեսրոպաբոյր.....Չարիատ  
 22- Հայոց լեզու .....Վահագն Դաւթեան  
 23-Ներբող մայրենի լեզվին .....Վահագն Դաւթեան  
 24- Հայերեն .....Խաչիկ դաշտենց  
 25- Հայոց լեզու .....Վարանդ  
 26- Մայրենի լեզու .....Ալմին  
 27- Դու մեծ շահագիր .....Տիգրան Պողոսեան  
 28-\*\*\* ..... Յովհաննես Թումանեան  
 29- Տղաս, լեզու հայկական ....Յակոբ Գիւմճեան  
 30- Իմ անգին լեզու .....Դել  
 31- Հայոց լեզուն .....Երևանո Բագէն  
 32- Հայոց գրերին .....Սկրտիչ Կորիւն  
 33-Հայոց տառեր, հայոց այբուբեն ....Մարո Մարգարեան  
 34- Հայոց լեզու .....Վահագն Կարենց  
 35- Մեր լեզուն.....Յենրիկ Թումանեան  
 36- Միակ մայրենին .....Միքայէլ Յարութիւնեան  
 37- Հայոց լեզու .....Արշալոյս Մարգարեան  
 38- Հայոց լեզու .....Նանսէն Միքայէլեան  
 39- Մայրենի լեզու .....Սուրեն Մուրադեան  
 40- Հայոց լեզու .....Համլետ Կարճիկեան  
 41- Մայրենի լեզու .....Սողոմոն Մկրտչեան  
 42- Հայոց լեզու .....Գեորգ Էրուքեան  
 43- Մեր դպրոցը .....Ժագ Ս. Յակոբեան  
 44- Հայերեն գիրք .....Ժագ Ս. Յակոբեան  
 45- Լեզու .....Ժագ Ս. Յակոբեան

**Գրքի համացանցային տարբերակը պատրաստել է «Արարատ» ՌԿ-ն**